



## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

«23» հոկտեմբեր 2023թ.

### Հ Ր Ա Մ Ա Ն N 231-ՉԻ

«ՇԻՐԱԿ ԱՎԻԱ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 29-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ «Ձ» ԿԵՏՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՐՏՈՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1936-Ն որոշման հավելվածով, հիմք ընդունելով Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի 2021 թվականի հոկտեմբերի 14-ի N 529-Ա հրամանով տրամադրված N 04 հավաստագիրը և 2023 թվականի հունիսի 16-ի N 276-Ա հրամանի N 1"4 հավելվածը և «Շիրակ Ավիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2023 թվականի հունիսի 22-ի թիվ SA-1043 և հունիսի 23-ի թիվ SA-1046 գրությունները .

### Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ՝

1. Նկատի ունենալով, որ «Շիրակ Ավիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) օդային տրանսպորտի միջազգային ասոցիացիայի (ԻԱՏԱ) ամառային և ձմեռային ժամանակահատվածում՝ 2023 թվականի հունիսի 26-ից՝ շաբաթական 1 (մեկ) չվերթ հաճախականությամբ Երևան/UDYZ/-Նիժնեկամսկ/ՍՊԿԵ/ երթուղով և 2023 թվականի հունիսի 27-ից՝ շաբաթական 1 (մեկ) չվերթ հաճախականությամբ Երևան/UDYZ/-Աստրախան/ՍՐՎԱ/ երթուղով Հայաստանի Հանրապետության տարածք, տարածքի ներսում և

տարածքից դուրս կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացմամբ բավարարում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով նախատեսված պայմաններին, չսպասարկված ուղղությունների և չվերթների հաճախականությունների պահանջներին, և հետևաբար սույն կետում նշված Երևան/UDYZ/-Նիժնեկամսկ/ՍՄՔԵ/ երթուղով մեկնող ուղևորներին տրամադրվող «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «զ» ենթակետով սահմանված արտոնության (այսուհետ՝ արտոնություն) սկիզբ սահմանել 2023 թվականի հունիսի 26-ը՝ 36 ամիս ժամկետով և Երևան/UDYZ/-Աստրախան/ՍՐՎԱ/ երթուղով մեկնող ուղևորներին տրամադրվող արտոնության սկիզբ սահմանել 2023 թվականի հունիսի 27-ը՝ 36 ամիս ժամկետով:

2. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի օդային փոխադրումների կարգավորման վարչության պետին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի հանձնումն ընկերությանը:

3. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի օգնականին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի տեղադրումը Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի կայքում:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ

ՍԻՄՈՆ ԱՍԱՏՐՅԱՆ

6/23/2023

X 

ՍԻՄՈՆ ԱՍԱՏՐՅԱՆ

Signed by: ASATRYAN SIMON 3811700103